

ՊԱՐՍԿԵՐԵՆԸ ՈՐՊԵՍ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԼԵԶՈՒ

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Երևանի Պետական Համալսարան

Իրանագիտության ամբիոն

Ամբիոնի ասիստենտ՝ Հասմիկ Բիանջյան

Ժամանակակից պարսկերեն (<<Իրանագիտություն>> մասնագիտություն)

Ուսումնամեթոդական ծրագիր

Կուրս – բակալավրիատ 3

Կիսամյակ 5-6

5-րդ կիսամյակ՝ քննություն, 6-րդ կիսամյակ՝ ստուգարք

Շաբաթական 10 ժամ գործնական պարապմունք

Պարսկերենը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքի հնդ-իրանական ճյուղի իրանական ենթաճյուղի հարավ արևմտյան խմբին:

Պարսկերենի զարգացման ընթացքում առանձնացնում ենք երեք շրջան.

Ա) Հին պարսկերեն (մ.թ.ա.6-րդ դարից մինչև մ.թ.ա. 4-3 դդ.): Այս լեզվով են ավանդված Աքեմենյան թագավորների սեպագիր արձանագրությանները:

Բ) Միջին պարսկերեն կամ պահլավերեն (մինչև մ.թ. 7դ.)՝ Մասանյանների և Պարթևների շրջանի լեզուն է:

Գ) Նոր պարսկերեն (8-9դդ.-ից մինչև մեր օրերը): Ժամանակագրական առումով նոր պարսկերենի զարգացմանը հատուկ է երկու փուլ՝ դասական 8-9դդ.-ից մինչև 15-րդ դար, նոր պարսկերեն՝ 15-րդ դարից մինչև այժմ:

Հին պարսկերենը եղել է թեքական լեզու՝ ըստ հոլովվող բառի սեռի (իգական, արական, չեզոք), ինչպես նաև թվի (եզակի, երկակի, հոգնակի) հոլովումը կատարվում էր վերջավորությունների փոփոխությամբ: Ուներ ութ հոլով: Մակայն աստիճանաբար նկատվում է հոլովական հմակարգի քայքայում՝ տարբեր հոլովների վերջավորությունները նույնանում են, առաջ է գալիս հոլովական իմաստներ արտահայտելու նոր միջոցների

անհրաժեշտություն: Այստեղ է, որ հանդես են գալիս կապերը՝ նախդիրներն ու ետադրությունը: Հին պարսկերենին հատուկ է եղել նաև բայակերպի քերականագրը:

Միջին պարսկերենն արդեն վերլուծական լեզու է: Այստեղ բացակայում են գոյականի երկակի թիվը, հոլովի և սեռի քերականական կարգերը:

Նոր պարսկերենը վերլուծական լեզու է: Խոսքի մասերի շարահյուսական հարաբերություններն արտահայտվում են տարբեր վերլուծական միջոցներով՝ կապերով, իզաֆեթային կառուցվածքով, նախադասության անդամների շարադասությամբ (պարսկերենում նախադասությունն, ի տարբերություն հայերենի, ունի կայուն շարադասություն) և այլն: Նոր պարսկերենը, միջին պարսկերենի նման, չունի հոլովի և սեռի քերականագրեր, գոյականի երկակի թիվ: Նոր պարսկերենով ստեղծվել է շատ հարուստ գրականություն. համաշխարհային գրականության գանձարանը հարստացրած և բազմաթիվ լեզուներով թարգմանված Ֆիրդուսիի «Շահնամեն», Սադիի «Գուլեսթանը», Խայյամի քառյակները, Հաֆեզի գազելները և շատ այլ գրական երկեր: Նոր պարսկերենը Իրանի Իսլամական հանրապետության պաշտոնական լեզուն է և արաբերենին զուգահեռ համարվում է իսլամական կրոնի երկու հիմնական լեզուներից մեկը: Նոր պարսկերենի զարգացման ժամանակակից փուլը կապված է իրանական առաջին հեղափոխության (1905-1911 թթ.) ժամանակաշրջանի հետ. երկրի պատմական զարգացման այս էտապում լեզվի բառային և քերականական համակարգը մոտեցավ ժողովրդախոսակցականին: Իրանական առաջին հեղափոխությունից հետո մոտավորապես երեք տասնամյակ (մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը) դեռևս շարունակվում էին գրական պարսկերենի՝ խոսակցական լեզվին առավել մոտ լինելու գործընթացները: Այդ պրոցեսներն առ այսօր չի կարելի ավարտված համարել:

Այսօր աշխարհում ավելի քան 120 000000 մարդ խոսում է պարսկերանով:

Ներկայումս շարունակում են աճել ու ամրապնդվել Հայաստանի հանրապետության միջազգային կապերը այլ երկրների՝ այդ թվում արևելյան

երկրների մասնավորապես Իրանի իսլամական հանրապետության հետ: Պարզից լեզվին տիրապետելը նպաստում է երկու հարևան ժողովուրդների փոխըմբռնմանը, օժանդակում հարևան երկրների միջև բարեկամական, գործարար, մշակութային կապերի բարելավմանն ու զարգացմանը, միջպետական բազմաբնույթ հարաբերությունների կայունացմանն ու առաջընթացին: Պարսկերենի իմացությունը հնարավորություն է ընձեռում բնագրերի միջոցով ընթերցելու այդ ժողովրդի հարուստ գեղարվեստական գրականությունը, ծանոթանալու գիտահանրամտչելի, հասարակական-քաղաքական գրականությանը:

Ճանաչողական արժեք ներկայացնող բովանդակալից տեքստերի յուրացումն ուսանողին հնարավորություն է տալիս առավել տեղեկացված լինել Իրանի պատմության, ազգային ավանդույթների, բարքերի ու սովորույթների, դրանց յուրահատկությունների, Իրանի տարածքում օգտագործվող բարբառների, խոսվածքների, այսօրվա Իրանի կյանքի մասին:

Ուսումնառության երրորդ տարում պարսից լեզվի ուսուցումը գործնական դասընթաց է, որի հիմքը դրվում է համալսարանական կրթության առաջին տարում: Դասավանդման առաջին փուլում, ՀՀ կրթության ու գիտության նախարարության կողմից երշխավորված <<Պարսկերենի դասագրքի>> (Բախշինյան, Բիանջյան, Ղազարյան, Մելիքյան 2011) քերականական, տեքստային նյութերի ու վարժությունների միջոցով, ուսանողը հնարավորություն է ստանում յուրացնելու լեզվի իմացության բազային գիտելիքներ: Բակալավրի կրթական համակարգի չորս և մագիստրական կրթության երկու տարիների ընթացքում յուրացված գիտելիքները՝ ավելանալով, խորանալով ու կատարելագործվելով, միտված են ապահովելու պարսկերենի իմացության բավարար, լավ և գերազանց մակարդակներ: Գիտելիքների ստուգումներն իրականացվում են Երևանի պետական համալսարանի կրեդիտային համակարգով նախատեսված չափանիշներով՝ բանավոր և գրավոր տարբեր ընթացիկ քննությունների, ստուգարքների, ամփոփիչ քննությունների, ռեֆերատների, կուրսային աշխատանքների, իսկ ավարտական փուլերում (բակալավրիատ, մագիստրատուրա) պետական քննությունների ու ավարտաթեզերի պաշտպանության միջոցով:

Պարսից լեզվի դասավանդումը կատարվում է պատմահամեմատական մեթոդով՝ միջ առարկայական (քերականություն, գրականություն, լեզվաբանության ներածություն, երկրագիտություն, պատմություն և այլ առարկաներ) կապերի իրականացման հիման վրա:

Ուսուցման երրորդ տարվա գործնական դասընթացը, բնականաբար, հիմնված է դասավանդման նախորդ երկու տարիներին մատուցվող նյութի վրա, դրա տրամաբանական շարունակությունն է կազմում և ապահովում է ուսանողի պարսից լեզվի իմացությունը՝ ըստ Երևանի պետական համալսարանի Իրանագիտության ամբիոնի բակալավրիատի չորսամյա ծրագրով նախատեսված երրորդ կուրսին առաջադրված պահանջների: Ուսումնառության այս փուլը բավականաչափ ծանրակշիռ և ծավալուն ուղղվածություն ունի՝ նախորդ երկու տարիներին ձեռք բերված գիտելիքների ամրապնդման, համաբերման, նյութի ծավալի ավելացման և ընդլայնման տեսակետից: Այստեղ՝ իրանցի ժամանակակից հեղինակների (Ալի Աքբար Դեհխոդա, Մոհամմադ Ալի Ջամալզադե, Սադեդ Հեդայաթ, Սաիդ Նաֆիսի, Սադեդ Չուբաք, Ջալալ ալ Ահմադ, Մոհամմադ Հեջազի, Ջոյա Փիրզադ, Գոլի Թարադի, Ահմադ Շավրու, Սոհրաբ Մեփեհրի և այլք) ստեղծագործությունների ուսումնասիրության միջոցով, կրթական շեշտը դրվում է ոչ միայն ուսանողների պարսից

լեզվի բառապաշարի ավելացման, յուրացրած քերականական նյութի՝ բնագիր տեքստերի միջոցով ամրապնդման վրա, այլև պարսկերենի դարձվածքներն ու արտահայտություններն ուսուցանելու, բանավոր-խոսակցական լեզուն ակտիվացնելու, հայերենից պարսկերեն և պարսկերենից հայերեն թարգմանչական հմտությունները հղկելու, պարսից լեզվի տարբերակային ձևերի ըմբռնման, զանազանման վրա: Չուզահեռներ անցկացնելով հայոց և պարսից լեզուների միջև, պարսկերենում, ինչպես և հայերենում կարելի է տարբերակել՝

ա) Գեղարվեստական լեզու

Այս լեզուն ստեղծվում և գործածվում է գեղարվեստական գրականության մեջ՝ գրողների կողմից:

բ) Խոսակցական լեզու

Մա լեզվի կենդանի, մշտապես փոփոխվող, զարգացող ոլորտն է, որտեղ փոխադարձաբար ներգործում են գրական և ոչ գրական իրողությունները, ձևավորվում են լեզվի զարգացման հիմնական միտումները, օրինաչափությունները:

գ) Գիտական լեզու

Գիտական լեզվին բնորոշ են սեղմությունը, հստակությունն ու ճշգրտությունը: Գիտական խոսքը կարող է արտահայտվել թե՛ գրավոր, թե՛ բանավոր ձևերով, բայց գիտության ոլորտում ավելի գերակշռող միջոց է գրավոր լեզուն:

դ) Պաշտոնական-գործարարական լեզու

Այս լեզուն կիրառվում է պետական հաստատություններում, դիվանագիտության մեջ, իրավական և վարչական տարաբնույթ գործունեություններ իրականացնելիս:

ե) Հրապակախոսական լեզու

Մարդու հասարակական-քաղաքական գործունեությունն արտահայտվում է այս լեզվի միջոցով: Բնականաբար այս լեզուն օգտագործվում է զանգվածային լրատվամիջոցներում, հրապարակախոսական ելույթների ժամանակ, երբ որոշակի ինֆորմացիա մատուցելով, ձգտում են համապատասխան վերաբերմունք առաջացնել ընթրցողի կամ լսողի մեջ:

ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ:

< զարգացնել ուսանողի պարսից լեզվի գիտելիքները,

< խթանել ուսանողի պարսկերենի խոսակցական-կիրառական ունակությունների զարգացումը,

< հղկել և ընդլայնել ուսանողի թարգմանչական կարողությունները՝ ուշադրություն դարձնելով հասկապես հայերենի և պարսկերենի լեզվամտածողությանների ընդհանրություններին ու տարբերություններին,

< առանձնակի ուշադրություն դարձնել մամուլից ընտրված քաղաքական բնույթի հոդվածների թարգմանությանը՝ տերմինաբանական բառապաշարի ընդլայնում (քաղաքական, տնտեսական, մամուլի և այլն), ինչպես նաև ժամանակին համընթաց կիրառության մեջ մտնող նոր բառային արտահայտությունների յուրացում,

< խորացնել ուսանողի գիտելիքները պարսկերենի դարձվածաբանությունից,

< նպաստել ուսանողի գրավոր և բանավոր խոսքի առաջընթացին և զարգացման ընդհանուր մակարդակին:

ԿՐԹԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

ա. կբարելավի և կզարգացնի պարսից լեզվի գիտելիքները,

բ. կկարողանա առավել հմտորեն ու վստահ կիրառել լեզուն զանազան ոլորտներում,

գ. կզարգացնի և կընդլայնի թարգմանչական հմտությունները,

դ. կզարգացնի գրավոր և բանավոր խոսքը,

ե. կկարողանա ճիշտ և տեղին կիրառել պարսկերենի դարձվածաբանական արտահայտությունները:

Հանձնարարվող գրականության ցանկ

1. Աբրահամյան Ս.Գ., Ժամանակակից գրական հայերեն, Եր., 1981
2. Բաղդկյան Խ.Գ., Ժամանակակից հայերենի, դարձվածային միավորները, Եր., 1986
3. Բեդիրյան Պ.Ս., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Եր., 1973
4. Բիանջյան Հ.Հ., Դարձվածքները և դրանց ոճական արժեքը Մոհամմադ Ալի Ջամալզադեի պատմվածքներում, Իրան Նամե, հ.44-45, Եր., 2013-2014, էջ 154-157
5. Գևորգյան Ե., Հայերենի դարձվածքները, Եր., 1969
6. Եզեկյան Լ.Կ., Հայերենի գործառական ոճերը, Եր., 1999
7. Եզեկյան Լ.Կ., Հայոց լեզվի ոճագիտություն, Եր., 2003
8. Լիբիկյան Արևելք, Եր., 1971
9. Հարությունյա Հ.Ա., Գեղարվեստական խոսք, Եր., 1986
10. Մարգարյան Ա., Հայերենի հարադիր բայերը, Եր., 1966
11. Մելքոնյան Ս.Ա., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984
12. Մետաքսի ճամփան (Իրանի ժամանակակից պատմվածքը. թրգմ.՝ Խ.Խաչեր), Եր., 1996
13. Մինասյան Ա.Գ., Հաֆեզ, Թեհրան, 1995
14. Նալբանդյան Գ.Մ., Պարսից լեզվի քերականություն, Եր., 1980
15. Ոսկե Գմբեթ. իրանական ժամանակակից պոեզիա (Նիմայից մինչև...) /թրգմ.՝ Էդ.Հախվերդյան/, Եր., 2004
16. Պարսկական երեք պատմվածք /թրգմ.՝ Վ.Աֆյան/, Եր., 2014
17. Պողոսյան Պ.Ս., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, 2, Եր., 1991
18. Սաադի, Գոլեսթան, Եր., 1958
19. Սոհրաբ Սեփեհրի, Կանաչ ծավալ, Եր., 2000
20. Абдулаева Ф.И., Средневековая персидская поэзия, Санкт –Петербург, 2001

21. Бианджян А. Г., М. Джамаль-заде о значении перевода в становлении персидской прозы нового типа, *Orientalia* 15, Ёр., 2013, сс. 30-35
22. Пейсиков Л. С. Вопросы синтаксиса персидского языка, Москва 1959
23. Пейсиков Л. С., Лексикология современного персидского языка, Москва 1975
24. Пейсиков Л. С., Очерки по словообразованию персидского языка, Москва 1973
25. Поляков К. И., Носырев А. А., Учебник персидского языка /основной курс, продвинутый этап обучения/, М., 2000
26. Рубинчик Ю.А., Основы фразеологии персидского языка, Москва 1981
27. Рубинчик Ю.А., Грамматика современного персидского литературного языка, Москва, 2001
28. Adabiyāt-e moāser-e Irān / tālif Esmāil Hākemi/, Tehrān, 1375 (1996)
29. Bāq-e sib, bārān va chand dāstān-e digar /bist qesse az 15 nevisande-ye armani, tadvin va tarjome-ye Ahmad Nurizāde/, Tehrān, 1390 (2011)
30. Bargozide-ye nazm o nasr-e fārsi ya fārsi va negāresh /Mehdi Mahvazi /, Tehrān, 1373 (1994)
31. Bahār M.T. /malekolshoārā/, Sabkshenasi, jeld-e 1, Tehran, 1370 (1991)
32. Behrangi S., Qessehā-ye Samad Behrangi, Tehrān, 1383 (2004)
33. Bolukbāshi A., Nowruz:jashn-e nowzāyi-e āfarinesh, Tehrān, 1384 (2005)
34. Daryā-ye gohar /tālif Mehdi Hamidi/, jeld-e 1, 1346 (1967)
35. Farrozzād F., Divān-e Foruq-e Farrozzād, Tehrān , 1380 (2001)
36. Hāfez Sh., Divān-e qazaliāt-e Xāje Hāfez-e Shirāzi / be kushesh-e Xalil Xatib Rāhbar /, Tehrān, 1365 (1986)
37. Hedāyat S., Farhang-e 'āmyāne-ye mardom-e Irān /gerdāvarande J.Hedāyat /, Tehrān, 1378 (1999)
38. Hedāyat S., Zende be gur,Tehrān, 1384 (2005)
39. Hoquqi M., Moruri bar tārix-e adab va adabiyāt-e emruz-e Irān, Tehrān, 1374 (1995)

40. Jamālzāde M., Yeki bud o yeki nabud, Tehrān, 1384 (2005)
41. Kātuzyan M., 14 maqāle dar adabiyāt, ejtemā', falsafe va eqtesād, Tehrān, 1375 (1996)
42. Mazdāpur K., Zardoshtiyān, Tehrān, 1382 (2003)
43. Matin P., Pushāk-e irānyān, Tehrān, 1383 (2004)
44. Mirsaīdi N., Irān-e bāstān, Tehrān, 1383 (2004)
45. Montaxabāt-e nasr-e moāser-e fārsi /Amir Abbās Heydari/, London, 1975
46. Montaxabāt-e motun-e fārsi /dowre-ye kelāsik va jadid/, jeld-e 1-2, Yerevān, 1999
47. Montaxabāt-e fārsi / zir-e nazar-e Āleksānder Govāxāriā /, Tiflis, 1384 (2005)
48. Montaxabāt-e fārsi /tadvin N.A. Meliksetyān/, Yerevān, 1975
49. Motii M., Tāis, Tehrān, 2001.
50. Nemunehā-ye nasr-e fārsi-e moāser /tadvin G.M.Nalbandyān/, Yerevān, 1963
51. 50 dāstān-e kutāh-e fārsi /gerdāvarande M.Xabāzyānzāde/, Tehrān, 1345 (1966)
52. Qessehā-ye tāze az ketābhā-ye kohne /negaresh Mehdi Āzaryazdi/, Tehrān, 1374 (1995)
53. Sādeq Hedāyat-e dāstān nevis /bar gozidei az dāstānhā-ye kutāh-e Sādeq-e Hedāyat. JāfarModares Sādeqi /, Tehrān, 1384 (2005)
54. Samarē Y., Āmuzesh-e zabān-e fārsi, jeld-e 3-4, Tehrān, 1368 (1989), 1372 (1993)
55. Sa'di M., Qazalhā-ye Saadi, Tehrān, 1362 (1983)
56. Sepānlu M., Nevisandegān-e pishrov-e Irān, Tehrān, 1387 (2008)
57. Soltānzāde H., Taxt-e Jamshid, Tehrān, 1383 (2004)
58. Taraqi G., Xāterehā-ye parākande, Tehrān, 1383 (2004)
59. Zendegināme-ye shāerān-e Irān /tālīf va gerdāvāri Leylā Sufi /, Tehrān, 1379 (2000)

Ինտերնետային կայքեր քաղաքական նյութերի համար՝

www.irna.com

www.farsnews.ir

“Ժամանակակից պարսկերեն” դասընթացի 3-րդ կուրսի թեմատիկ պլան
(5-րդ կիսամյակ, 160 ժամ)

N	Թեմա		Ժամապանակ	Գործնական պարապմունք
	Հեղինակ	Ստեղծագործություն		
1	Mohammad Hejāzi	Pand-e rustā	6	6
2	M. Avestā	Begu	4	4
3	Rasul Parvizi	Qesse-ye eynakam	2	2
4	Fereydun Tonkāboni	Zendegi	8	8
5	Zoyā Pirzād	Qesse-ye xargush va gowjefarangi	4	4
6	Leylā Syfi	Shahriār	2	2
7	Shahriār	Hālā chera?	2	2
8	Ali Akbar Dehxodā	Zaban-e tarjome	4	4
9	Parviz Nātel Xānlari	Nevisahdegi	4	4
10	Afshār	Zendegināme-ye Jamālzāde	2	2
11	Mohammad Ali Jamālzāde	Bile dig bile choqondar	12	12
12	Beh Āzin	Fadākār	4	4
13	Mohammad Ali Jamālzāde	Mellat o dowlat-e Irān	6	6
14	Leylā Sufi	Fereydun Moshiri	2	2
15	Fereydun Moshiri	Kuche	4	4
16	Mohammad Ali Eslami Nadushan	Firuzi-e shekestxordegān	6	6
17	Hoseinali Rashed	Edālat-e ejtemāi	4	4
18	Leylā Sufi	Hāfez-e Shirāzi	4	4
19	Hāfez	Yusef-e gomgashte...	4	4
20	Sāid Nafisi	Rāh-e ādam shodan	6	6
21	Hosein MortazāiānĀbkenār	Ān shab māh nabud	2	2
22	Goli Taraqqi	Xāne-i dar āsemān	12	12
23	Qolamhosein Sādiq	Peydāyesh-e nasr-e fārsi	4	4
24	Goli Taraqqi	Mādām Gorgeh	10	10
25	Bozorg 'Alavi	Āb	2	2
26	Sādeq Hedāyat	Ābji xānom	4	4

27	Hāfez	Agar an tork-e shirāzi...	4	4
28	Manucheher Motii	Zan-e asir va Xashāyārshā	6	6
29	Leylā Sufi	Foruq-e Farrozzād	2	2
30		Nāmeḥā-ye Foruq be pedarash	6	6
31	Foruq Farrozzād	'Arusak-e kuki	4	4
32	Leylā Sufi	Sa'di	2	2
33	Sa'di	Az Golestān	6	6
34	Emām Xomeyni	Sāye-e eshq	4	4
35	Mohammad Hejāzi	Shirin Kalā	4	2
			160	

(6-րդ կիսամյակ , 160 ժամ)

N	Թեմա		Ժամաքանակ	Գործնական պարապմունք
	Հեղինակ	Ստեղծագործություն		
1	Mohammad Ali Jamālzāde	Rajol-e siyāsi	18	18
2	Nāder Ebrāhimi	Mardi dar qorbat	4	4
3	Hāfez	Raftam be bāq sobhdami...	4	4
4	Bijan K., Yusef M., H. Nāderi	Āyin-e sugvāri dar Dolfān-e Lorestān	6	6
5	Ali Moradyār Ahmadi	Marāsem-e 'arusi dar dehkadehā-ye Borujerd	6	6
6	Fereydun Tavalloli	Maryam	2	2
7		Tārixche-ye Nowruz	8	8
8	Sa'di	Man nadānestam...	4	4
9	Mohammad Dowlatābādi	Bā Shobeyrow	8	8
10	Beh Āzin	Daryā	2	2
11	Sādeq Hedāyat	Zende be gur	12	12
12	Hoseyin Sanāpur	Tārik va gelālud	2	2
13	Hāfez	Dāram az zolf-e siyāhash...	4	4
14	Simin Dāneshvar	Be ki salim konam?	6	6
15	Peymān Hushmandzāde	Do tā noqte	2	2
16	Nezām ol Molk	Qāzi-ye setamgar	4	4
17	Hāfez	Yāri andar kas nemibinam	4	4
18	Sādeq Hedāyat	Āyine-ye shekaste	6	6
19	Jamāl Mirsādeqi	Mowj	2	2
20	Ahmad Mahmud	Shahr-e kuchek-e mā	8	8
21	Amin Faqiri	Chāre-ye nāchār	4	4
22	Mahmud Dowlatābādi	Āyine	2	2

23	Lotfali Suratgar	Avvalin ruz-i ke be xāter dāram	4	4
24	Lotfali Suratgar	Az daftar-e xāterāt-e yek olāq	6	6
25	Sa'di	Ey sārebān...	4	4
26	Davud Qaffar zadegan	Ma se nafar budim	4	4
27	Sa'id Nafisi	Mantaqe-ye bicharegi	2	2
28	'Ali Dashty	Vazir-e darbār va naft	6	6
29	Sa'di	Shuresh-e bolbolān	4	4
30	Mehdi Hamidi	Fāteme	6	6
31	Nimā Yushij	Āy ādamhā	2	2
32	Mehdi Hamidi	Behesht-e man	4	4
			160	

Միջանկյալ և վերջնական քննությունների բովանդակությունը և գնահատման համակարգը

„Ժամանակակից պարսկերեն,, դասընթացը ներառում է 2 միջանկյալ, 1 կիսամյակային քննություն / 5-րդ կիսամյակ / և 2 միջանկյալ քննություն՝ վերջնական արդյունքով / 6-րդ կիսամյակ /, ինչպես նաև կուրսային աշխատանքի պաշտպանություն:

Բոլոր միջանկյալ քննությունները գրավոր են, ներառում են ծանոթ և անծանոթ նյութերի թարգմանություններ՝ պարսկերենից հայերեն և հակառակը:

Կուրսային աշխատանքի պաշտպանությունն իրականացվում է ըստ դեկանատի կողմից նշանակված ժամանակացույցի:

Գնահատման համակարգը, ըստ ԵՊՀ միջանկյալ, վերջնական /բանավոր և գրավոր / քննություններին առաջադրված չափանիշների, ներառում է հետևյալ բաղադրիչները՝ առարկայի իմացություն, կարդալու տեխնիկայի տիրապետում, թարգմանչական հմտություն, նյութի վերարտադրման, շարադրանքի կարողություն: Գնահատման համակարգը ենթադրում է առարկայի բազային և խորացված իմացություն:

Հանրագումարային գնահատականը ձևավորվում է ԵՊՀ-ի ընդունած չափանիշների համաձայն՝ ներառելով դասերի հաճախումները, միջանկյալ ու վերջնական քննությունների արդյունքները: